կրոդումն նուագին ոչ ինչ վնասեաց նոցա. այլ մանաւանդ զինքեանք զանօ-
րէնքն կոտորեցին թշուառքն։ Իսկ նոքա բնաւ չի շարժեցան զօրքն Տեսբոթին.
և էին ի միում տեղւոջն հաւաքեալ։ Եւ յետոյ հրամայեաց զի ելանիցէ իւր
մաքսաւորն, և խաղալ երիվարաւ, որպէս օրէն է հեծելոց. և ի նոյն ժամ
ել և անկաւ երիվարիւ և զարկաւ զգետնի, և ոլորեցաւ պարանոցն նորա։
Զոր այդ անօրէնն այլ բազում նեղութիւնս յարոյց ի վերայ եղկելի ազգին
մերոյ. վասն որոյ պատուհասեցաւ ի Տեառնէ։ Եւ յաւել եւս երկրորդումն
զորիշ ոմն հանել զի խաղասցէ. և նորա գտակն անկաւ ի գլխոյ իւրմէ։

Յետ այսց բանից ապա սկսաւ քաջալերել զզօրքն իւր և ասել. Ո՛ արք
մեծամեծք և իշխանք, լերուք քաջ, և դիմեցէք ի վերայ այս անհաւատից,
զի կոտորեսցուք զդոսա, և մի՛ ապրեսցի ի նոցանէ և ոչ ոք։ Եւ հպարտա-
ցաւ իւր ամբարտաւանութեամբն. և ահա առհասարակ զօրովք իւրովք դի-
մեցին ի վերայ նոցա, որպէս երբեմն Գողիաթ ի վերայ Դաւթի։ Եւ յոր-
ժամ հարին ճակատամարտն նորա, ի նոյն ժամն կոտորեցաւ անօրէնք զօրքն
նորա. և Տեսբոթին զօրքն ամենայն էր 1200 հոգի. և նոքա էին իբրեւ
40,000 արք պատերազմողք և հմուտ կռուոյ. և աստուածային կարողութեամբ
զօրացան և կոտորեցին մինչեւ խսպառ. բայց որք խոնարհեցան և հնազան-
դեցան՝ զնոսա բնաւ չի կոտորեց։ Եւ յորժամ այս եղեւ, ինքն պիղծն ան-
կաւ փախստական. վասն զի ոչ կարացին ըմբռնել զամբարիշտն. և ելաւ ի
բարձր բլուր մի, և նայեցաւ ի վերայ զօրաց իւրոց, եթէ որպէս կորեաւ
ինքն և զօրքն իւր. և սկսաւ լալ դառնապէս, և ի միտ ածել զիւր անօրէ-
նութիւն, եթէ այս պատուհաս ի Տեառնէ է, և Տէրն ինքնին ետ պատե-
րազմ, և իւր հզօր ձեռամբ սատակեաց զիս և զօրքն իմ, որ ոչ կարացի
զդէմ ունել 40,000աւ զայսչափ սակաւ զօրքն։ Եւ ի սոյն խորհուրդ ընկաւ
փախստական, և հալածական. ելաւ գնաց յերկրէն իւրմէ՝ ի Թուրքաց աշ-
խարհն։

Եւ այս Տեսբոթն եկն առ Սեչովն և մերձեցաւ. և ահա դարձեալ ազդե-
ցին նմա, եթէ այդ պիղծն դարձեալ կրկին զօրքն ժողովել է, և ահա կամի
գալ։ Իբրեւ լուաւ Տեսբոթն՝ դարձաւ և գնաց ի վրայ նորա. և կրկին ան-
կամ պատերազմեցան, և դարձեալ կոտորեցին զնոսա, և հազար թուրք ընդ
նոսա, զոր բերել էր ի Աղքերմանէն՝ որ օգնէին նմա։ Յետ այսորիկ դար-
ձաւ մեծաւ ուրախութեամբ և եկն ի Սեչով քաղաքն ի դախան իւր. և զա-
մենայն մեծամեծ և զիշխանքն փոխեց, և որիշ կացոյց ի վերայ ամենայն
իշխանութեանց. և որք հնազանդեցան՝ նոցա ետ դարձեալ զիշխանութիւն նո-
ցա։ Եւ Խոդինա բերդին զպակալապան (բերդապահ) եհան, և ի նոցա
տեղի զոմն զՖռանդ եդիր ի բերդն, որ կոչիւր Բիսոցքիյէ։ Եւ այլ որիշ քա-
ղաքն և բերդ որչափ կայ յերկիրն այն, զամենեսեան իշխանութենէ փո-
խեաց, և Լադինացիք կացոյց Օլախաց տեղն։ Եւ յետ այսորիկ նստաւ իւր
պարոնութիւնն. և Թուրքին զրկեց որ դրուլ (Թուղրա?. կնիք) բերեն, որ
նմա խարտ տայ, զայս առաջին ամն. և յետոյ որպէս Տէրն տայ՝ այնպէս